Կարգապահական գործ թիվ ԿԳ-25095

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՍԱՄՎԵԼ ԼԵՎՈՆԻ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ և զեկուցող անդամ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Արաքս Վարդանյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

քննության առնելով փաստաբան Սամվել Լևոնի Միրզոյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 245), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Արման Վլասյանը և Անահիտ Գյուլնազարյանը **(այսուհետ նաև՝ Դիմողներ),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ Պալատ)**, հայտնել են, որ 2024թ. հոկտեմբերին որոշել են Արտաշատում գտնվող գույքը վաճառել, որն ունեցել է 1 սեփականության վկայական՝ բաղկացած տնից և հողամասից, որոնք ամբողջությամբ գրավադրված են եղել «Արդշինբանկ» ՓԲԸ-ում: Ֆինանսական դժվարությունների պատճառով որոշել են վաճառել տան որոշակի հատվածը:

Դիմողները նշել են, որ գնորդ Նարեկ Բաղալյանին հայտնել են այդ ամենի մասին և ծանոթացրել փաստաբան Սամվել Միրզոյանի հետ, ով 100.000 ՀՀ դրամ գումարի դիմաց կազմել է պայմանագիր, իսկ վճարման դիմաց փաստաբանը չի տրամադրել որևէ կտրոն:

Թիվ ԿԳ-25095-2-Ա
15.04.2026թ.

Փաստաբանն առաջարկել է, որ Դիմողների ամբողջ գույքը հաջորդող գրավի պայմանագրով գրավադրվի Նարեկ Բադալյանի մոտ: Բաժին առանձնացնելու, բանկից թույլտվություն ստանալու և մնացած գործընթացը հարթ կազմակերպելու համար Սամվել Միրզոյանը հավելյալ 660.000 ՀՀ դրամ գումար է պահանջել և ստացել:

Դիմողները նշել են նաև, որ Սամվել Միրզոյանը և Նարեկ Բադալյանը չեն սպասել, որ Դիմողները գույքի բաժանում կատարեն, այլ դիմել են դատարան, որպեսզի ամբողջ գույքը մնա Նարեկ Բադալյանի մոտ գրավադրված:

Ըստ Դիմողների՝ Փաստաբանն անցել է Նարեկ Բադալյանի կողմը և իրենց կողմից տրված տեղեկատվությունը և փաստաթղթերն օգտագործել է իրենց դեմ:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողները խնդրել են Փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 20.02.2026թ. Դիմողներին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն այդպիսիք չեն ներկայացվել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները</u>.

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Փաստաբանին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Արման Վլասյանի և Անահիտ Գյուլնազարյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 24.12.2025թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ 2024թ. հոկտեմբերին Դիմողները դիմել են իրեն՝ բանկում գրավադրված տունն առանձնացնելու և Նարեկ Բադալյանին վաճառելու հարցով:

Փաստաբանը նշել է, որ առաջարկել է, որպեսզի գնորդը իր փաստաբանի հետ ներկայանա: Հոկտեմբերի 5-ին ներկայացել են գնորդը, նրա մայրը և կինը: Նարեկ Բադալյանը հայտնել է Փաստաբանին, որ վստահում է իրեն և առանձին փաստաբանի կարիք չունի, ինչին ի պատասխան՝ Փաստաբանը նշել է, որ իր գրասենյակում բոլորի իրավունքները պաշտպանված են հավասարապես:

Սամվել Միրզոյանը նշել է, որ իր կողմից կազմվել է երկու փաստաթուղթ՝

1. տունը տարաժամկետ վճարման պայմանով վաճառելու պայմանագիր,
2. Անահիտ Գյուլնազարյանի կողմից տրված համաձայնագիր:

Հաջորդիվ, Փաստաբանը կազմել է «Անշարժ գույքի հաջորդող գրավով ապահովված պայմանով կնքված խառը նախնական պայմանագիր»:

Այս ամենը, ըստ Փաստաբանի կրել է խորհրդատվական բնույթ, պայմանագիր չեն կնքել և Դիմողներն իրեն տվել են 100.000 ՀՀ դրամ, որի դիմաց Դիմողները կտրոն չեն պահանջել և չեն ստացել:

Փաստաբանը հավելել է, որ նոտարի մոտ պայմանագիր կնքելիս Անահիտ Գյուլնազարյանը չի ներկայացել, ինչից զարմացած է եղել նաև ամուսինը, քանի որ արդեն իսկ բավականին մեծ գումար փոխանցվել է իր հաշվեհամարին:

Փաստաբանը հայտնել է, որ հետագայում Նարեկ Բադալյանը փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել իր հետ, վճարել 500.000 ՀՀ դրամ գումար, և 19.12.2024թ. որպես Նարեկ Բադալյանի շահերի պաշտպան դիմել է դատարան ամուսինների դեմ՝ պայմանագիրը կնքելուն պարտադրելու վերաբերյալ: Հետագայում գումարի բռնագանձման հայց են ներկայացրել ամուսինների դեմ:

Փաստաբանի համար զարմանալի է նույնիսկ, որ ամուսիններն իրեն համարում են իրենց փաստաբանը:

Կից ներկայացվել են կազմված փաստաթղթերը, ինչպես նաև Նարեկ Բադալյանի կողմից Անահիտ Գյուլնազարյանի հաշվին կատարված փոխանցումները հավաստող բանկային անդորրագրերը:

Փաստաբանը 26.01.2026թ. ներկայացրած բացատրությամբ պարզաբանել է, որ Արման Վլասյանը, ում շահերը Փաստաբանը պաշտպանել է 2023-2024թթ. մայիս-հունիս ամիսներին, դիմել է իրեն բանկում գրավադրված գույքի օտարման հարցով: Փաստաբանը հայտնել է, որ խորհրդատվության դիմաց իրեն չեն վճարել, քանի որ Արման Վլասյանն եղել է իր հարևանը:

Փաստաբանը նշել է, որ որոշ ժամանակ անց իրեն դիմել է Արման Վլասյանի կինը և գույքի գնորդը նույն խնդրի կապակցությամբ և դարձյալ Փաստաբանն անվճար խորհրդատվություն է տրամադրել գույքի առքուվաճառքի վերաբերյալ:

Փաստաբանը ներկայացրած բացատրությամբ ընդունել է, որ Դիմողները հանդիսացել են իր վստահորդները, ինչպես նաև ընդունել է այն հանգամանքը, որ կարող էր ստանձնել նաև գույքի գնորդ՝ Նարեկ Բադալյանի իրավունքները պաշտպանությունը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 20.02.2026 թվականին Փաստաբանին առաջարկվել է Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 24.02.2026թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ նախորդիվ ներկայացրած բացատրություններով արդեն իսկ մանրամասն անդրադարձել է սպասարկող անձնակազմի աշխատակցի բարձրացված հարցերին: Մասնավորապես, Փաստաբանը հերքել է Դիմողների վկայակոչած փաստերը, նշելով, որ վերջիններս իր վստահորդները չեն հանդիսացել:

Փաստաբանը նշել է, որ առ այսօր շարունակում է մատուցել ծառայություններ Նարեկ Բադալյանին:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 29.12.2025թ. թիվ 357-Ա/ԿԳ-25095 որոշմամբ փաստաբան Սամվել Միրզոյանի նկատմամբ **Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի**, ինչպես նաև **Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 3.2.2 և 3.2.8 ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

09.01.2026թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 09.03.2026թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-6-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 15.04.2026թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Դիմողներին պատկանող Արարատի մարզ, Արտաշատ համայնք, Մարքսի փողոց 6 շենք 27/1 հասցեում գտնվող 58.9 քմ բնակարանը (**այսուհետ՝ անշարժ գույք**) օտարելուն ուղղված գործարքի ուղեկցման համար վերջիններս 2024թ. հոկտեմբերին դիմել են Փաստաբանին և պայմանավորվածություն ձեռք բերել իրավաբանական օգնություն ցույց տալու մասին, սակայն պայմանագիր չի կնքվել: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

2. Դիմողները վճարել են Փաստաբանին մատուցվելիք ծառայությունների դիմաց: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

3. Փաստաբանը Դիմողներին տրամադրել է իրավական խորհրդատվություն, կազմել է մի շարք փաստաթղթեր՝ պայմանագրեր, համաձայնագրեր և այլն, որպեսզի կազմակերպվի Դիմողների անշարժ գույքի առուվաճառքը գնորդ՝ Եարեկ Բաղալյանին:

Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, ինչպես նաև 09.10.2024թ.փարաժամկետ հանդիպական պարտավորությունների կատարման մասին Պարտավորագրով, 16.10.2024թ. Հայտարարագրով, 10.10.2024թ. Համաձայնագրով, դրամական մուտքերի օրդերներով, 09.12.2024թ. ստացականով, ինչպես նաև 09.10.2024թ. Հիփոթեքի նախնական խառը պայմանագրով:

4. Կողմերի միջև անշարժ գույքի առքուվաճառքի գործարքը չի կայացել: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, ինչպես նաև թիվ ԱՎԴ/1202/02/25 քաղաքացիական գործերով «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

5. Փաստաբանը փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել գնորդ Նարեկ Բադալյանի հետ, ստանձնել նրա իրավունքների պաշտպանությունը թիվ ԱՎԴ/1256/02/24 քաղաքացիական գործով և ներկայացրել հայցադիմում պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջի մասին ընդդեմ Դիմողների: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԱՎԴ/1256/02/24 քաղաքացիական գործերով «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

6. Փաստաբանը ստանձնել է Նարեկ Բադալյանի իրավունքների պաշտպանությունը թիվ ԱՎԴ/1202/02/25 քաղաքացիական գործով և Դիմողների դեմ ներկայացրել հայցադիմում գումարի բռնագանձման պահանջի մասին: *Սույն փաստը հաստատվում է ԱՎԴ/1202/02/25 քաղաքացիական գործերով «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Սամվել Միրզոյանը փաստաբան է հանդիսանում 15.07.1994 թվականից, և 2021-2026թթ ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Սամվել Միրզոյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.2 և 3.2.8 ենթակետերի խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

7.1 Հանձնաժողովը անդրադառնալով 3.2.2 ենթակետով նախատեսված խախտման հանգամանքին արձանագրում է հետևյալը.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է առաջնորդվել առնվազն հետևյալ վարքագծի կանոններով. (...)*

5) ցույց չտալ իրավաբանական օգնություն, երբ՝ (...)

դ. պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը. (...):

Կանոնագրքի 3.2.2 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանն իրավունք չունի իրավական օգնություն ցույց տալ երկու կամ ավելի վստահորդի նույն հարցով, եթե նրանց շահերի միջև հակասություն կա:* ***Փաստաբանը պարտավոր է ցույց չտալ իրավաբանական օգնություն, երբ պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:*** *Նշված դեպքում փաստաբանը հանձնարարությունը կարող է ընդունել միայն* ***վստահորդի գրավոր համաձայնության*** *պայմանով (այս պայմանը համարվում է պահպանված նաև փաստաբանի (փաստաբանական գրասենյակի) և վստահորդի միջև կնքված պայմանագրում համապատասխան վերապահում կատարված լինելու դեպքում...:*

Կանոնագրքի 1.4 կետի 8-րդ պարբերության համաձայն՝ *վստահորդ է հանդիսանում ֆիզիկական կամ իրավաբանական անձ (պետություն կամ համայնք), որը դիմել է փաստաբանի օգնությանը. վստահորդը նաև հանդիսանում է պատվիրատու,*

Նույն կետի 9-րդ պարբերության համաձայն՝ *պատվիրատու է հանդիսանում վստահորդ չհանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը փաստաբանի կամ փաստաբանական գրասենյակի հետ կնքել է պայմանագիր վստահորդի շահերը ներկայացնելու համար:*

Նույն կետի 10-րդ պարբերության համաձայն՝ *հակառակորդ կողմ է հանդիսանում փաստաբանի վստահորդի հետ վեճ ունեցող անձը, կամ փաստաբանի վստահորդի դատավարական հակառակ կողմը.*

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով* ***դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից****, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից*:

Օրենքի այս պահանջը պարտադրում է նորմատիվ իրավական ակտը մեկնաբանել առնվազն տառացի նշանակությամբ:

Վերոնշյալ նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետով և Կանոնագրքի 3.2.2 ենթակետով սահմանված արգելքը վերաբերում է այն իրավիճակին, երբ փաստաբանը, նախկինում որևէ անձի հետ փաստաբանի օգնությանը դիմելու կապակցությամբ իրավական հարաբերություն ունենալուց հետո, ստանձնում է այդ անձի շահերին հակադիր անձի շահերը՝ առանց նախկին վստահորդի գրավոր համաձայնության:

Օրենքի վերոնշյալ կանոնը պահանջում է երկու պայմանից մեկի առկայություն, որպեսզի փաստաբանի վարքագիծի համարվի իրավաչափ՝ նախկին և ներկա վստահորդների շահերի միջև հակասության բացակայություն կամ նման հակասության դեպքում փաստաբանի նախկին վստահորդի գրավոր համաձայնություն իր հետ շահերի հակասություն ունեցող անձի շահերը տվյալ փաստաբանի ներկայացման վերաբերյալ:

Ուստի Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի և Կանոնագրքի 3.2.2 ենթակետի կիրառման համար Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում պարզել հետևյալ հարցերը.

1. արդյո՞ք Դիմողներ Արման Վլասյանը և Անահիտ Գյուլնազարյանը Կանոնագրքի իմաստով հանդիսացել են Փաստաբանի նախկին վստահորդները,
2. արդյո՞ք Փաստաբանը հետագայում իրավաբանական օգնություն է ցույց տվել այլ՝ նոր վստահորդի,
3. արդյո՞ք Դիմողների և Փաստաբանի հետագա վստահորդի շահերը հակասել են միմյանց,
4. արդյո՞ք առկա է եղել Դիմողների գրավոր համաձայնությունը՝ իրենց շահերին հակադիր անձի շահերը Փաստաբանի կողմից ներկայացնելու վերաբերյալ:

Անդրադառնալով առաջին հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն կարգապահական գործով հաստատված է, որ Դիմողները 2024 թվականի հոկտեմբերին դիմել են Փաստաբանի օգնությանն իրենց պատկանող անշարժ գույքի օտարման գործարքի իրավական ուղեկցման նպատակով, իսկ Փաստաբանն այդ կապակցությամբ տրամադրել է խորհրդատվություն և կազմել է իրավաբանական բնույթի փաստաթղթեր: Հետևաբար Հանձնաժողովը գտնում է, որ Դիմողներ Արման Վլասյանը և Անահիտ Գյուլնազարյանը նշված իրավահարաբերության շրջանակներում Կանոնագրքի իմաստով ձեռք են բերել Փաստաբանի վստահորդի կարգավիճակ: Այն հանգամանքը, որ կողմերի միջև գրավոր պայմանագիր չի կնքվել կամ Փաստաբանը Դիմողների անունից դատական ներկայացուցչություն չի իրականացրել, չի վերացնում արդեն իսկ առաջացած փաստաբան-վստահորդ հարաբերության իրավական նշանակությունը:

Անդրադառնալով երկրորդ հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն կարգապահական գործով հաստատված է, որ Դիմողների հետ նշված գործարքի կապակցությամբ մասնագիտական հարաբերություն ունենալուց հետո Փաստաբանը փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել գնորդ Նարեկ Բաղալյանի հետ և ստանձնել վերջինիս շահերի պաշտպանությունը: Մասնավորապես, Փաստաբանը Նարեկ Բաղալյանի անունից Դիմողների դեմ ներկայացրել է հայցադիմում պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ինչպես նաև հետագայում Դիմողների դեմ ներկայացրել է գումարի բռնագանձման պահանջի մասին հայցադիմում: Հետևաբար Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Փաստաբանը Դիմողների հետ նույն գործարքի կապակցությամբ մասնագիտական հաղորդակցություն ունենալուց հետո նույն իրավահարաբերությունից ծագած վեճերով իրավաբանական օգնություն է ցույց տվել այլ՝ նոր վստահորդին:

Անդրադառնալով երրորդ հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիմողների և Նարեկ Բաղալյանի շահերը նույն անշարժ գույքի օտարման գործարքի և այդ գործարքի չկայանալու հետևանքով առաջացած վեճերի շրջանակներում հակասել են միմյանց: Նարեկ Բաղալյանի կողմից Դիմողների դեմ ներկայացված պահանջները՝ պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու և գումարի բռնագանձման վերաբերյալ, իրենց բնույթով ուղղված են եղել Դիմողների գույքային և իրավական շահերի դեմ:

Նշված հանգամանքների պայմաններում Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Դիմողների և Փաստաբանի նոր վստահորդ Նարեկ Բաղալյանի շահերը հակասել են միմյանց: Սույն դեպքում շահերի հակասությունը կրել է ոչ թե վերացական կամ ենթադրյալ բնույթ, այլ բխել է նույն անշարժ գույքի օտարման գործարքից, դրա չկայանալու հետևանքով առաջացած վեճերից և կողմերի ներկայացրած փոխադարձ հակադիր իրավական ու գույքային շահերից:

Անդրադառնալով չորրորդ հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետով և Կանոնագրքի 3.2.2 ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը շահերի հակասության

պայմաններում իրավաբանական օգնություն ցույց տալու պարտադիր պայման է: Այսինքն՝ եթե փաստաբանը պետք է ներկայացնի նոր վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, ապա փաստաբանը հանձնարարությունը կարող է ընդունել միայն նախկին վստահորդի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

Սույն կարգապահական գործի նյութերով չի հաստատվել, որ **Դիմողներ Արման Վլասյանը և Անահիտ Գյուլնազարյանը գրավոր համաձայնություն են տվել փաստաբան Սամվել Միրզոյանին՝ իրենց շահերին հակադիր անձի՝ Նարեկ Բադալյանի շահերը ներկայացնելու վերաբերյալ:** Հետևաբար Օրենքով և Կանոնագրքով նախատեսված բացառությունը տվյալ դեպքում կիրառելի չէ:

Վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը, Դիմողներին նույն անշարժ գույքի օտարման գործարքի կապակցությամբ իրավաբանական օգնություն ցույց տալուց հետո, առանց վերջիններիս գրավոր համաձայնության, ստանձնելով և իրականացնելով նույն իրավահարաբերությունից ծագած վեճերով Դիմողների շահերին հակադիր անձի՝ Նարեկ Բադալյանի շահերի պաշտպանությունը, թույլ է տվել Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի և Կանոնագրքի 3.2.2 ենթակետի պահանջների խախտում:

7.2 Հանձնաժողովը անդրադառնալով 3.2.8 ենթակետով նախատեսված խախտման հանգամանքին արձանագրում է հետևյալը.

Կանոնագրքի 3.2.8 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պետք է հրաժարվի նոր վստահորդի օգտին գործել, եթե առկա է նախորդ վստահորդի կողմից վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ, կամ եթե այն տեղեկատվությունը, որին տիրապետում է փաստաբանը նախորդ վստահորդի վերաբերյալ, կարող է անբարեխիղճ արտոնություն ստեղծել նոր վստահորդի համար:

Կանոնագրքի 3.2.8 ենթակետի նորմատիվ բովանդակությունը հանգում է նախորդ վստահորդի կողմից փաստաբանին վստահված գաղտնիքի բացահայտման վտանգին և **այդպիսով նոր վստահորդի համար անբարեխիղճ արտոնություն ստեղծելու հնարավորությանը: Այսինքն՝ սույն ենթակետի խախտումը վրա է հասնում ոչ թե համապատասխան տեղեկատվության բացահայտման կամ դրա հետևանքով նախորդ վստահորդի համար անբարենպաստ հետևանքների առաջացմամբ, այլ միայն դրա հնարավորությամբ:** Հետևապես, եթե առկա է վտանգ կամ հնարավորություն, որ նոր վստահորդի շահերը պաշտպանելով՝ նախկին վստահորդի կողմից փաստաբանին հայտնված գաղտնի տեղեկությունները կարող են բացահայտվել, և (կամ) փաստաբանի կողմից այդ տեղեկատվության տիրապետման հետևանքով կարող է անբարեխիղճ արտոնություն առաջանալ նոր վստահորդի մոտ նախկին վստահորդի նկատմամբ, ապա փաստաբանը պարտավոր է հրաժարվել նոր վստահորդի օգտին գործելուց: Այսինքն՝ միայն վերոնշյալ հետևանքների առաջացման հնարավորությունը բավական է, որ

փաստաբանի համար առաջանա նոր վստահորդի հետ հարաբերությունները խզելու պարտավորությունը, որի չկատարումը հանգեցնում է փաստաբանի կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 3.2.8 ենթակետի խախտման համար:

Հարկ է նշել նաև, որ նույնիսկ եթե առկա լիներ վստահորդի գրավոր համաձայնությունը՝ ուղղված փաստաբանին, Կանոնագրքի 3.2.8 ենթակետի վրա այն չի կարող տարածվել:

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ փաստաբանական գաղտնիք են համարվում այն տեղեկությունները և ապացույցները, որոնք իրավաբանական օգնություն հայցող անձը փոխանցել է փաստաբանին, փաստաբանի տված խորհրդատվության բովանդակությունն ու բնույթը, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները, որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն:

Նշված իրավակարգավորումներից հետևում է, որ փաստաբանական գաղտնիքի հասկացությունը ունի լայն բովանդակություն և չի սահմանափակվում միայն այն տեղեկություններով, որոնք հետագայում ներկայացվել են դատարան կամ արտացոլվել են դատական ակտերում: Փաստաբանական գաղտնիքի շրջանակում կարող են ներառվել նաև փաստաբան-վստահորդ մասնագիտական հաղորդակցության ընթացքում քննարկված գործարքի պայմանները, կողմի նպատակները, ակնկալիքները, իրավական դիրքորոշումները, ֆինանսական և գույքային դրությունը, բանակցային դիրքը, ինչպես նաև փաստաբանի կողմից տրված խորհրդատվության բովանդակությունն ու բնույթը:

Սույն կարգապահական գործով հաստատված է, որ Դիմողներ Արման Վլասյանը և Անահիտ Գյուլնազարյանը 2024 թվականի հոկտեմբերին դիմել են Փաստաբանին՝ իրենց պատկանող, բանկում գրավադրված անշարժ գույքի օտարման գործարքի իրավական ուղեկցման նպատակով: Փաստաբանը այդ կապակցությամբ Դիմողներին տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն, կազմել է գործարքին առնչվող փաստաթղթեր, այդ թվում՝ տարաժամկետ հանդիպական պարտավորությունների կատարման մասին պարտավորագիր, հայտարարագիր, համաձայնագիր, հիփոթեքի նախնական խառը պայմանագիր և գործարքին առնչվող այլ փաստաթղթեր:

Նման պայմաններում, Փաստաբանը գործարքի իրավական ուղեկցման ընթացքում, օբյեկտիվորեն տեղեկացել կամ կարող էր տեղեկանալ Դիմողների գույքային դրության մասին, գույքի գրավադրված լինելու հանգամանքին, գործարքի իրականացման պայմաններին, Դիմողների ակնկալիքներին, գնորդի հետ պայմանավորվածությունների բովանդակությանը, վճարման պայմաններին, գործարքը չկայանալու պատճառների մասին, ինչպես նաև նույն գործարքից ծագող հնարավոր վեճի դեպքում Դիմողների իրավական և փաստական դիրքորոշումների համար նշանակություն ունեցող տեղեկություններին:

Հետագայում, երբ նույն անշարժ գույքի օտարման գործարքը չի կայացել և Դիմողների ու գնորդ Նարեկ Բաղալյանի միջև առաջացել է վեճ, Փաստաբանը ստանձնել

է Նարեկ Բաղալյանի շահերի պաշտպանությունը և վերջինիս անունից Դիմողների դեմ ներկայացրել է դատական պահանջներ՝ պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու, ինչպես նաև գումարի բռնագանձման պահանջների վերաբերյալ:

Հանձնաժողովը գտնում է, որ նշված փաստական հանգամանքների պայմաններում առկա է եղել նախկին վստահորդների կողմից Փաստաբանին վստահված տեղեկությունների բացահայտման վտանգ և այդ տեղեկություններին Փաստաբանի տիրապետման հետևանքով նոր վստահորդ Նարեկ Բաղալյանի համար անբարեխիղճ արտոնություն ստեղծելու ողջամիտ հնարավորություն: Սույն դեպքում այդ վտանգը չի կրել վերացական կամ ենթադրյալ բնույթ, քանի որ Փաստաբանի կողմից նոր վստահորդի շահերը ներկայացվել են ոչ թե նախկին վստահորդների հետ կապ չունեցող առանձին իրավահարաբերությամբ, այլ նույն անշարժ գույքի օտարման գործարքից ծագած վեճերի շրջանակում:

Հանձնաժողովը կարևոր է համարում ընդգծել, որ նույն գործարքի իրավական ուղեկցման փուլում նախկին վստահորդներին խորհրդատվություն տրամադրած և գործարքին առնչվող փաստաթղթեր կազմած փաստաբանի կողմից հետագայում նույն գործարքից ծագած վեճով հակադիր կողմի շահերը ներկայացնելն օբյեկտիվորեն խաթարում է փաստաբան-վստահորդ հարաբերությունների նկատմամբ վստահությունը: Իրավաբանական օգնություն հայցող անձը պետք է վստահ լինի, որ փաստաբանին փոխանցված տեղեկությունները, փաստաբանի հետ քննարկված իրավական դիրքորոշումները և փաստաբանի կողմից տրված խորհրդատվության բովանդակությունը հետագայում չեն կարող դրվել իր շահերին հակադիր կողմի պաշտպանության հիմքում կամ վերջինիս համար ստեղծել դատավարական կամ բանակցային առավելություն:

Ընդ որում, Կանոնագրքի 3.2.8 ենթակետի կիրառման համար Հանձնաժողովը պարտավոր չէ հաստատել, թե նախկին վստահորդներից ստացված կոնկրետ ո՞ր տեղեկությունն է փաստացի օգտագործվել նոր վստահորդի օգտին: Բավարար է, որ գործի հանգամանքների բազմակողմանի և օբյեկտիվ ուսումնասիրության արդյունքում ձևավորվի ողջամիտ համոզվածություն, որ փաստաբանը նախկին վստահորդների վերաբերյալ տիրապետել է այնպիսի տեղեկությունների, որոնց բացահայտման կամ օգտագործման վտանգը, կամ դրանց հիման վրա նոր վստահորդի համար անբարեխիղճ արտոնության ստեղծման հնարավորությունն օբյեկտիվորեն առկա է եղել:

Սույն պարագայում միայն այն հանգամանքը, որ Փաստաբանը նախ իրավաբանական օգնություն է ցուցաբերել Դիմողներին նույն անշարժ գույքի օտարման գործարքի շրջանակում, իսկ հետագայում նույն գործարքից ծագած վեճերով ներկայացրել է նոր վստահորդ Նարեկ Բաղալյանի շահերը ընդդեմ Դիմողների, բավարար է խախտման փաստն արձանագրելու համար:

Այսպիսով, Հանձնաժողովը եզրակացնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա է Կանոնագրքի 3.2.8 ենթակետի պահանջների խախտում:

8. Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի

շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Համաչափության սկզբունքը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Մեղքի աստիճանը

Տվյալ պարագայում, Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ գործի նյութերով հաստատված է համարվում Փաստաբանը, նախկին և ներկա վստահորդների շահերի հակասության և նախկին վստահորդի համաձայնության բացակայության պայմաններում, ոչ միայն միջոցներ չի ձեռնարկել նոր վստահորդների կողմից տրվող հանձնարարության ընդունումից հրաժարվելու ուղղությամբ, այլ նաև հետագայում, նշված փաստը բացահայտելու պայմաններում, չի դադարեցրել նոր վստահորդների շահերի պաշտպանությունը՝ այդ թվում երբ ի հայտ էր եկել վստահված գաղտնիքի կամ այնպիսի տեղեկատվություն բացահայտման վտանգ, որը կարող է անբարեխիղճ արտոնություն ստեղծել նոր վստահորդների համար:

Ընդ որում, Փաստաբանը չէր կարող չգիտակցել, որ հետագայում Նարեկ Բաղալյանի շահերի ներկայացումը ուղղված է լինելու ընդդեմ նախկին վստահորդների շահերին:

Կարգապահական խախտման հետևանքները

Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ Փաստաբանն իրեն մեղսագրվող արարքը կատարելով գործել է ի վնաս իր նախկին վստահորդներ՝ Դիմողների, ում շահերը պետք է վեր դասեր իր շահերից:

Փաստաբանի անձը, կարգապահական վարույթները, առկա տույժերը

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Սամվել Միրզոյանը փաստաբան է հանդիսանում 15.07.1994 թվականից, և 2021-2026թթ ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ «նկատողություն» կարգապահական տույժի կիրառումը չի կարող համարվել բավարար և համաչափ արձագանք՝ թույլ տրված խախտման բնույթին և ծանրությանը:

Սույն գործով հաստատված խախտումը չի կրել ձևական կամ նվազ նշանակություն ունեցող բնույթ: Այն առնչվել է փաստաբանական գործունեության հիմնարար պարտականություններին՝ վստահորդի շահերի հակասության բացառմանը, ինչպես նաև նախկին վստահորդից ստացված տեղեկությունների բացահայտման կամ դրանց հիման վրա նոր վստահորդի համար անբարեխիղճ առավելություն ստեղծելու վտանգի կանխմանը:

Փաստաբանը նախ իրավաբանական օգնություն է ցուցաբերել Դիմողներին նույն անշարժ գույքի օտարման գործարքի շրջանակում, տրամադրել է խորհրդատվություն, կազմել է գործարքին առնչվող փաստաթղթեր, իսկ հետագայում նույն իրավահարաբերությունից ծագած վեճով ստանձնել է գնորդ Նարեկ Բաղալյանի շահերի պաշտպանությունը և վերջինիս անունից հայց է ներկայացրել Դիմողների դեմ և իրականցրել ներկայացուցչություն: Նման վարքագիծը օբյեկտիվորեն խաթարում է փաստաբան-վստահորդ հարաբերությունների նկատմամբ վստահությունը և ստեղծում է այն տպավորությունը, որ նախկին վստահորդը կարող է հայտնվել այնպիսի իրավիճակում, որտեղ իր նախկին փաստաբանը գործում է իր դեմ՝ նույն իրավահարաբերությունից բխող հարցով:

Հանձնաժողովը կարևորում է նաև, որ խախտումը չի սահմանափակվել մեկ առանձին գործողությամբ: Փաստաբանը ոչ միայն ընդունել է նոր վստահորդի հանձնարարությունը նախկին վստահորդների շահերին հակադիր պայմաններում, այլև շարունակել է այդ շահերի պաշտպանությունը դատական վարույթում՝ ընդդեմ նախկին վստահորդների **և շարունակում է մատուցել ծառայություններ Նարեկ Բաղալյանին:**

Վերոգրյալ հանգամանքները վկայում են, որ «նկատողություն» կարգապահական տույժը տվյալ դեպքում բավարար չէր լինի թույլ տրված խախտման բնույթին և ծանրությանը համաչափ արձագանք ապահովելու, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ուղղիչ և կանխարգելիչ նպատակներին հասնելու համար:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը առավել խիստ կարգապահական տույժի կիրառումը տվյալ դեպքում համաչափ չի համարում՝ հաշվի առնելով Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, մասնավորապես՝ կարգապահական տույժերի բացակայությունը, ինչպես նաև այն, որ սույն գործով կարգապահական ներգործության նպատակը կարող է իրացվել խիստ նկատողության և համապատասխան

մասնագիտական վերապատրաստման միջոցով՝ նմանատիպ իրավիճակները կանխարգելելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-ին և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Սամվել Լևոնի Միրզոյանի (արտոնագիր՝ թիվ 245) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 6 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.2 և 3.2.8 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25095-2-Ա
15 ապրիլի 2026թ.
ք.Երևան